

այն փոփոխամիս թէռփիլսի ասեն Մեթովիս
քանի մը օր ազատութիւն ունեցաւ : Ըստ
պատմագրաց այս իշխանը շատ ուսումնասէր
ըլլալով, և չկրազով ուրիշներէն հասկնալ իր
մէկ կարգացած զբքին աարդիութիւններն ,
միտքը եկաւ Մեթովիս, որուն զիտութիւնը
անուանի էր, և որ ասանկ երկար մարտիրոսու-
թեամբ սրբութեան մեծ համբաւ ստացած էր :
Էր : Խրկեց իրեն իւր սենեկապիհներէն մէ-
կը և շուր մը պալատ բերել տուաւ : Մեթո-
վիս մեկնեց այն մութ մասը և թէռփիլսու
այնչափ պանչացաւ՝ որ զինքը քուլը պահեց :
Բայց այն անվախ մարդը, որ արժանի եղաւ
խոսովանողի փառաւոր անուան, հազի թէ-
իւր ազատութիւնը գտաւ, սկսաւ կտրճութեամբ

քարոզել պատկերամարտից դէմ : Կայսրը ուսա-
աթի բարկացած, զարձեալ ձազկել տուաւ մո-
զովրկեան զիմաց, և մեծ պալատին զեանա-
փորաց մէջ բանաեց : Այս անզամ կտրին բա-
րեկամներ զիշերանց բանտին գուոը կտրե-
ցին և զարս հանեցին խեղճ վարդապիհաը, որ
քիչ մը ասեն պահուած կեցաւ : Թէռփիլս
զարձեալ ուզեց բռնել տայ, բայց Մեթովիսու
անոր մոսաց վրայ անզզալի կերպով իշխեր էր,
և այն ասենաւան թիզանվիզ կայսերաց պէս
թէռփիլս աշ շաս սիրող ըլլալով Աստուածա-
բանական նրբին ինքոց, կ' ախործէր Մեթո-
վիսի մահիկ ընել, որ Աստուածաշնչի մէջ զը-
նուած պատկերաց վարդապիհութիւնը կը մեկ-
նէր անոր : Հարայարելի

Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ *

Մալթ էր երկինք, մնթ ամսերով,
Զիւնի պատանք ծածկէր զ'երկիր,
Հարուան ի' խիղճ՝ աղքատան ի' ոոլ՝
Տանջրէին անկարեկիր
Փոմորկալից քամին հեծէր
Հոգեարքի զինչ հառաջանք,
Սառեցնէր շորցնէր հիւծէր,
Բերելով հեան ցաւ ու տանջանք:
Պակայն հրեշտակը իրենց թեւոք
Ամպերն իսկոյն վանեցին բաց,
Եւ լուսաւոր ասաեղ ի' գող՝
Սիրոյ լապտերն վառեց Աստուած.
Այս' սիրոյ էր լապտերն
Այն գիսաւոր աստղն ամեհի,
Որ լուսափայլ մեզ աւետէր [մեղի :
ի' մուուր ծնած փրկին գալաւոտն յայանէր

Փափկամարտին այն մերկ մանկան
Որ գողգուն ննջէր մրսկոս
Ախորի մէջ ի սէր մարդիան,
Եղանց գառանց շնչին կարօս:
Նա մեզ համար ազնիւ եղբարք
Ծնաւ մեւաւ մերկ խեղճ ւ' աղքատ
Որպէս զի մենք լինինք արդարց,
Բարեյն ի' սէր միշա ի' նըկատ:
Մենց որ փափուկ տաք անկողնում
Ծրնինց հանգինց ու մեւանինց,
Կամ վայելենք հաճոյք ինզում,
Գզուանք ծնողաց, խաղ եւ յարկինք,
Ցիշենք մանուկն ախորին մէջ,
Որ ի' սէր մեզ աղքասացաւ
Բառնալ զմեզու խոսմն ու լիճն,
Որ ամնքէ մարդկութեան ցաւ :

1888 14 դեկտ. հ. Պոլս

Պ. Հ. Ա. Կ. Ա. Մ. Ե. Ա.

* Վազումեռիկ անմահանուն գերասանին, և միանգամայն ազգիս և օտարաց սիրելի Պ. Հ.
Ազամեանի սուանաւոր գրուածոց բնագրեն մեզ յայնձնուած լինելով (ի Պ. Լոթնցիս Աբա-
մեանէ) բնազմալիպի միջոցաւ կը սկսինք ի լցո ընծայել, չնայելով արդէն քանի մի այս ինչ
կամ այն թերթից մէջ հրատարակուածներուն, ի վերջո ինչպէս յանձնալին նոյնալին մեր փա-
փառն է նաև առանձին հատորիկով մի հրատարակել: